ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՇԻՐԻՄԻ ԱՌՋԵՎ

Սիրելի բարեպաշտ հայորդիք. մեզ համար մեծագույն գոհունակություն է տեսնել այսօր մեր ժողովրդի զավակաց խմբված մեծանուն Կաթողիկոսի, մեծանուն Հայրապետ Խրիմյան Հայրիկի շիրիմի շուրջ հոգեհանգստյան պաշտոն կատարելու և աղոթք առ Աստված բարձրացնելու՝ հայցելով խաղաղ հանգիստ Մկրտիչ Առաջին Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հոգուն:

Գեղեցիկ է երևույթը, որ որդեգրել է Վասպուրական միությունը. ամեն տարի որպես ուխտ ներկայանալու Մայր Աթոռ Ս. Էջմիածին, իրենց հարգանքը մատուցելու Խրիմյան Հայրիկի հիշատակին, իսկ մեզ՝ Եկեղեցիներիս համար այս արարողությունը նույնպես իմաստն ունի ծառայության ուխտի նորոգության, որովհետև Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն այն մեծանուն Հայրապետներից էր, որ իր անձն ու իր կյանքը նույնացրել էր իր ժողովրդի ճակատագրի հետ, նրա առօրյա կյանքի, նրա ուրախությունների, նրա տառապանքների, նրա ցավերի, նրա ողբերի հետ: Եվ պատահական չէ, որ այսօր, կանգնած Խրիմյան Հայրիկի շիրիմի առջև, նրա տապանաքարին մենք կարդում ենք արձանագրված՝ «Նվագող վշտից հայրենյաց հայոց», որը հաստատվում է Հովհաննես Թումանյանի այն վկայությամբ, թե ինչպես է մի քահանա ներկայանում Հայոց Հայրիկին և իր վիշտն ու ցավը պատմում: Ներկայացնելով, թե քանի զավակ է կորցրել, որ իր ընտանիքի ողջ անդամները դարձել են զոհ թուրք յաթաղանի, Հայոց Հայրիկը հարցնում է. «Որքա՞ն անձեր են եղել ընտանիքիդ մեջ, որ կորցրել ես, Տեր Հայր», պատասխանում է՝ շուրջ քսան, և քահանան ներկայացել էր Հայրիկի օրհնությունը ստանալու: Խրիմյան Հայրիկը, գլուխը խոնարհելով քահանայի առջև, ասում է. «Տեր Հայր, դու է, որ այս պահին պետք է օրհնես ինձ, որովհետև իմ կորուստս շատ ավելի մեծ է, իմ կորուստս իմ ժողովրդի բազմահազար զավակներն են»:

Արդարև, սիրելիներ. Խրիմյան Հայրիկը մեր ժողովրդի այն զավակներից էր, որը որքան հեռանում է մեզանից, այնքան ավելի է ընկալելի դառնում մեզ համար նրա մեծությունը՝ անձի և գործի: Մեծ հայրենասեր, նվիրյալ հայրենյաց, մեծագույն ուսուցիչ, դաստիարակ: Խրիմյան Հայրիկի հոգին այսօր, կարծում եմ, պետք է որ խոսի յուրաքանչյուր հայորդու, որովհետև այն զգացումները, այն մտածումները, այն ոգին, որ տրոփում էր Խրիմյան Հայրիկի կրծքի ներքո, համահունչ է մեր այս ժամանակներում ապրելու, հարատևելու, հայրենիքը շենացնելու, հայրենիքը զորացնելու պահանջներին, որ անհրաժեշտ է ներդրվի յուրաքանչյուր հայորդու կողմից հայրենական կյանքից ներս:

Մենք մեր գլուխն ենք խոնարհում մեր մեծագույն Հայրապետի՝ Խրիմյան Հայրիկի շիրիմի առջև, մեր սերը վերստին հաստատելով իր անձին, իր գործին և իր առա-

քելությանը, որն իր կենդանության իսկ օրոք մեծագույն գնահատանքի է արժանացել մեր ժողովրդի զավակաց կողմից, որ շնորհել է Ամենայն Հայոց Հայրապետին **Հայրիկ** անունը՝ այս բառի մեջ ամփոփելով իր սերը, իր հարգանքը, իր հավատարմությունը նրա առաքելությանը, նրա գործին և նրա հավատքին:

Թող Տերը վառ պահի հիշատակը Հայոց Հայրիկի և արգասավորի այդ հիշատակը նորանոր արարումներով, նորանոր իրագործումներով մեր հայրենական կյանքից ներս: Լինենք մշտապես հավատարիմ Հայոց Հայրիկին, նրա զգացումներին, նրա ապրումներին դեպի Հայրենին հայոց, դեպի ժողովուրդը: Թող Ասպված օրհնի իրականություն դարձած երազը Հայոց Հայրիկի, որ է՝ անկախ Հանրապետությունը Հայոց, և պարգևի շեն ու բարգավաճ կյանք ու խաղաղ օրեր երկրին մեր և ժողովրդին հայոց. այժմ և հավիտյանս. ամեն: